Համագործակցությունը հանրային մարմինների հետ

Կանխարգելման մեխանիզմի ներկայացուցիչների կողմից գործադրվում է արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների՝ միջազգայնորեն ընդունված երկու հիմնական տեսակ՝ անմիջապես ներկայացվող առաջարկներ, ինչպես նաև անհրաժեշտ ուսումնասիրությունից հետո գրավոր ձևակերպմամբ իրավասու մարմնին ներկայացվող պահանջներ կամ առաջարկներ:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկման յուրաքանչյուր այցի ավարտին վեր հանված խնդիրները նախ քննարկվում են համապատասխան հաստատության ղեկավարության հետ, ապա այցերի ընթացքում արձանագրված խնդիրների, դրանց լուծումների առնչությամբ իրականացվում են քննարկումներ իրավասու հանրային մարմինների հետ, կատարված այցերի վերաբերյալ իրավասու մարմիններից պահանջվում գրավոր են պարզաբանումներ՝ նրանց ներկայացնելով յուրաքանչյուր այցի արդյունքներն ամփոփող վերլուծություններ: Դրանք ոչ միայն նկարագրում են վեր հանված խնդիրները, այլև մասնագիտական վերլուծությունների հիման վրա առաջարկում են լուծման իրավական և գործնական մեխանիզմներ՝ պարունակելով նաև ոլորտի իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ:

Ստացած պարզաբանումներն ու տեղեկություններն արտացոլվել են կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան և արտահերթ զեկույցներում:

Հանրային համապատասխան մարմինների հետ կազմակերպվում են աշխատանքային հանդիպումներ՝ բարձրացված խնդիրների քննարկման և դրանց լուծմանն աջակցելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի, այդ թվում՝ կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների զարգացման նպատակով պարբերաբար իրականացվում են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների և փորձագետների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու ուժեղացմանն ուղղված միջոցառումներ: Միջազգային կազմակերպությունների, գործընկեր պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվում են զգալի թվով վերապատրաստման դասընթացներ, դասավանդողների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցում են Պաշտպանի աշխատակազմի, Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի անդամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ և լրագրողներ, ինչպես նաև պետական համապատասխան մարմինների ներկայացուցիչներ: